Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար աթոռների, սեղանների և հովանոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/37 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19 — 28 օգոստոսի 2023թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Լևոնյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Մամբրեյան, Ա.Նասլյան, Ա.Բաբայան, Է.Մնացականյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գների վերաբերյալ

Չափաբաժնի համարը	***Չափաբաժնի անվանումը***	***Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)***
1	աթոռներ	1750000
2	սեղաններ	800000
3	արևից պաշտպանող հարմարանքներ	1120000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 24.08.2023թ.-ին ժամը 10:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 25.08.2023 թ.-ին ժամը 10:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	ԴՈՆԵՌ ՍՊԸ	ք.Երևան Գայի 51/5	098815666	donernorq@yandex.ru
2	Շուշան Տեխնիկս ՍՊԸ	ք Երեւան, Զավարյան 57/19	055656556	karlos.baghramyan@gmail.com
3	«ԳԱԳ-ՄԱՐԿ» ՍՊԸ	Կասյան փ. 26/9 16	023422861	shahinyanmurad@mail.ru

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/37 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Մասնակիցներ	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	ԴՈՆԵՌ ՍՊԸ	24999999	20 %	29999998.8	1458333	20 %	1749999.60	
2	ԴՈՆԵՌ ՍՊԸ	24999999	20 %	29999998.8	666666	20 %	799999.20	
3	Շուշան Տեխնիկս ՍՊԸ	1116400	0 %	1116400	1116400	0 %	1116400.00	
	ԴՈՆԵՌ ՍՊԸ	24999999	20 %	29999998.8	24999999	20 %	29999998.80	Մերժված
	«ԳԱԳ-ՄԱՐԿ» ՍՊԸ	30000000	20 %	36000000	30000000	20 %	36000000.00	Մերժված

Աճուրդն ամփոփվել է 25.08.2023 թվականին: Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Համակարգի կողմից համարվել է ԴՈՆԵՌ ՍՊԸ-ն, Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Համակարգի կողմից համարվել է Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ ԴՈՆԵՌ ՍՊԸ-ի և Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտերը /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/, արձանագրեց՝

- ԴՈՆԵՌ ՍՊԸ-ի հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ /Հավելված 1/ Ընթացակարգի ծածկագիրը ենթակա է շտկման, անհրաժեշտ է նշել «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/37»: «ԴՈՆԵՌ ՍՊԸ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ ոստիկանության զորքեր-ի կողմից «ՀՀ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-23/3/Բ/1/ՕԲ» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 1,2,3,4,5,6 չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ» նախադասությունը անհրաժեշտ է խմբագրել նշելով՝ «ԴՈՆԵՌ ՍՊԸ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/37 ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 1,2,3 չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ»: Մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը նշված է հայերեն: Բացակայում է Մասնակցի ղեկավարի պաշտոնը: Հավելված 1-ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ 1-ին և 2-րդ չափաբաժնում «Ապրանքային նշան», «Արտադրող» սյունակները ենթակա են շտկման, անհրաժեշտ է նկարագրել /նշել/ առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը և արտադրողը: «Տեխնիկական բնութագիր» սյունակում 1-ին և 2-րդ չափաբաժնում նշված է <--, ->, անհրաժեշտ է eauction.armeps.am համակարգի միջոցով նշել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը:

- Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ի հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ 3-րդ չափաբաժնում «Ապրանքները նոր է չօգտագործված (նոր), երաշխիքային ժամկետը՝ 1 տարի» նախադասությունը անհրաժեշտ է խմբագրել, նշելով՝ «Ապրանքները նոր են չօգտագործված, երաշխիքային ժամկետը՝ 1 տարի»: «Անհրաժեշտ է ապրանքների տեսքը, ձևը և գույնը, նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացվում է մատակարար ընկերության կողմից:»

նախադասությունները անհրաժեշտ է խմբագրել, նշելով՝ «Ապրանքների տեսքը, ձևը և գույնը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Տեղափոխումն ու բեռնաթափումը կիրականացվի Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ի կողմից:»:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, Հանձնաժողովը որոշեց 28.08.2023թ. նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ԴՈՆԵՌ ՍՊԸ-ին և Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 30.08.2023թ. ժամը 10:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտերի գնահատման մասին

Նիստը վերսկսվեց 30.08.2023թ. ժամը 10:00-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները, իսկ ԴՈՆԵՌ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները և հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ ԴՈՆԵՌ ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել վերջինիս հայտը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

10. Տվյալներ՝ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու, ընտրված մասնակցի և մերժված հայտերի, Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով պայմանագիր կնքելու մասին որոշման և Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու, անգործության ժամկետի, Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով պայմանագրի կնքման վերաբերյալ

30.08.2023 թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի:

10.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ին Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով հայտարարել ընտրված մասնակից, իսկ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով մյուս մասնակիցների հայտերը մերժել:

10.3 Հաստատել Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով պայմանագիր կնքելու մասին որոշման և Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստերը:

10.4 Անգործության ժամկետ է սահմանվում Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով պայմանագիր կնքելու որոշման մասին և Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.5 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով ընտրված մասնակից Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Նախագահ՝ Լևոն Լևոնյան

անդամներ՝ Վաչե Մամբրեյան

Արմեն Նասլյան

Արտակ Բաբայան

Էլեն Մնացականյան

քարտուղար՝ Հերմինե Սաղաթելյան